

Ամբաս Բիրաս
Խմբագրութիւն «Փիիհնիկ», ի
Աղեփասանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՄԱՆ

Ղր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

Ֆր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱՂ. 6

ՓԻԻԿՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 23

«Լ՝ՕՐՕՐ», ի 8 Հոկտ. ի Խմբագրականին ազատ քարգմ. ը

ՀԱՅԱՍՏԱՆԸ

Եւրոպան, Հայաստանի նախորդ ջարդերուն անխառնի պատասխանատուն, հիմնայ ելեր անելի ահուելի պատասխանատուութիւններ կ'առնէ վրան՝ մօտալուտ ջարդերուն մէջ:

Ապս-իւլ-Համիս չէ դադրած «հասիկ հասիկ» սպաննելէ 1894-1896ի Մեծ Ապանդներէն ի վեր: Անպատիժ մնալովը զօրացած՝ կը պատրաստէ նոր Աղէտ մը: Կ'ուզէ բնաջինջ ընել բնակչութիւնները, որոնք միջնա դարի իրմէն նոյնպէս եւ ուժը վանած են ուժով գլխաւորապէս Զեթունի լեռնցիները: Մուռ ու Սասուն սպանութիւնները կը բազմապատկուին: Ապագայ ջարդի հողին վրայ կը կուտակուին Օսմ. գնդերը. զօրերը կ'իջնեն կը պատկին տունը բնակչին զոր պիտի սպաննեն: Հաղորդակցութիւնները կտրուած են վաղուան զոհերուն ու մնացեալ մարդոց միջեւ. իշխանութիւնք ալ չ'են բողոք անցը-

նել ո՛չ նամակ ո՛չ սուրհանդակ: Զանազան կողմերէ կ'ընդունինք նեզրիտ տեղեկութիւններ. Բիեն Բիշեար անդադրում կը քաղէ անկէ «Pro Արմենիա» ի մէջ:

Արդ. 1894-1896 ին, «խաղախորթեաց» ազգերը, — եւ առաջին տեղը կը բռնէ Ֆրանսականը, Հայերուն անանդական պատեպանութիւն, — կըրցան իրենց օգնութեան կանչել Տիգրանի չմեղանքը: Կառավարութիւնները գիտցած էին ամեն բան, բայց ամեն բան ծածկած էին ժողովուրդներէն: Մեր հանրապետութեան Նախագահը, մեր նախարարները, բացարձակապէս սուտ խօսած էին Խորհրդարանաց առջեւ, մեր «մեծ մատուցը» սուտ խօսելու համար վարձուած էր Ապս-իւլ-Համիսի գործակալներէն: Երբ որ 300,000 մարդկային անմեղ էակներ խողխողուեցան վայրագութեան զարհուրելի նրբացումներովը, վեհանձն ճշմաստիւնները պատեալ ունեցան ըսելու, Գերմանացոց պէս, Անգլիացոց պէս. «Ա՛խ, եթէ նեմարտութիւնը կուտանք ըլլայինք... Բայց բան մը չ'էինք գիտեր»:

Այսօր, *Երոպան ամեն բան գիտե-*
 Ռնիրը կը նիւթուի իր աչքին առջեւ,
 or orի կ'ազդարարուի իրեն: Չ'լսեց,
 քիչ առաջ, սպանդանոց սարուղ ամ-
 բողջ ազգի մը նիչը: Կը լսէ, այս ժա-
 ման, յուսահասական կանչն ու կոծը
 դեռ ապրողներուն, որոնք մաագործնե-
 րուն՝ իրենց դանակները սրելը կը
 տեսնեն:

Եթէ ոնիրը կասարուի լմնայ,
 Արեւմտի վաս ազգերը պիտի ա'լ չ'կը-
 նան անոր ամօքը նետել զիրենք կառա-
 վարողներուն վրայ, անոնք ամենքն ալ
 ու բոլորովին մեղակիցներ պիտի ըլ-
 լան Մարդասպանին:

Դժբաղդ Հայերը, մեր մէջ ա-
 պասանած իրենց եղբայրներուն ձայ-
 նովը՝ օգնութիւն կը հայցեն: Աղերա-
 գիրներ կ'ուղղեն վեհապետներուն, նա-
 խարարներուն, լրագիրներուն: Խեղճ
 մարդեր, որոնց վստահութիւնը դեռ չը
 բուծուեցաւ այնքան մասնութիւններէն:
 Վեհապետները, նախարարները, Խորհ-
 դարանի նախագահները զորս օգնու-
 րեան կը կանչեն իրենք, ամենքն ալ
 սրիզուած են քրական շփուցան-
 ներով...:

Յրանսան կտոր մ'ազդեցութիւն
 կրնայ բանեցնել լոկ պաշտպանելու
 համար Կ. Պոլսոյ մէջ Կրանէ-Գոնսսան
 ընկերութեան պղտոր պահանջները:

Չարը, իր արժանաւոր դաշնակիցը,
 կ'արգիլէ ռուս մամուլին՝ խօսել Հայ-
 րուն վրայ, կ'արգիլէ ռուս քաղաքա-
 ցիներուն՝ օգնել Հայերուն: Կը փակէ
 ռուսական Հայաստանին ազգային
 դպրոցները. *բասն սարուան սեպիրիս-*
կան քիարանի կը դասապարտէ Ռու-
 սահայերը որ կը փորձեն սահմանա-
 գրուիսն անցնիլ երթալ կռուելու հա-
 մար ու մեռնելու Թուրքիոյ իրենց եղ-
 բայրներուն հետ:

Յրանսացի նախարար՝ մ'է, Հանօթօ,
 որ անհամեմատ շնորհակցութեամբ մը
 ծախեց Հայ արիւնը բուրբ փողոսիչնե-

րուն: Ռուս դիւանագէտ՝ մ'է ըսողը.
 «Երբ ա'լ չը մնայ Հայ, օձիքնիս ազա-
 սած պիտի ըլլանք հայկական հարցէն»:

Եթէ Հայերուն բաղոն իրենց սե-
 փական ձեռքին մէջը չէ՛, Յրանսայի
 եւ Ռուսիոյ կառավարութեան ձեռքե-
 րուն մէջն է: Արդ, Ռուսական եւ Յրան-
 սական կառավարութիւնները, Հան-
 րապետութիւնն ու Չարը որ «կասարեալ
 համաձայնութեան» մէջ են գործադրե-
 լու համար *գօգազ*՝ քաղաքականութիւնն
 ամեն ձեռերուն տակ, նպաստաւորել մի-
 այն կրնան բնաջնջուը դեռ լմնայուած
 Հայերուն:

Ինչո՞ւ,

Շատ պարզ է:

Շատ անգամներ բացատրած եմ թէ
 ինչպէս կռիւն անխուսափելի է, քիչ
 ասեմէն, միջազգային յեղափոխու-
 րեան ու միջազգային յեղադէմ ընդ-
 դիմութեան միջեւ բոլոր Երոպական
 ցամաքին վրայ: Յոյց տուած եմ թէ՛
 արեւմտեան ազգերուն բուլաջումն ընդ-
 հանրապէս՝ ու Յրանսական ազգինը
 մասնաւորապէս, շնորհիւ մասնիչնե-
 րուն ու փաղաքուցներուն, միշտ պիտի
 արգիլէր մեր մէջ պայթումին առաջ
 գալը: Պայթումը մեր մէջ հակահար-
 ուածով միայն առաջ կուգայ: *Արե-*
ւելքի մէ՛ջ վառելու է պատրոյզը:

Հոս բոլոր պատրոյզները թաց են.
 զանոնք քաթդեցին Սամօս կամ Յո-
 դանանու ջուրին մէջ:

Կրկնեցի թէ՛ Յեղափոխութիւնը
 մեզի պիտի գար արեւելեան Երոպա-
 յէն, Բեթերսպուրկէ կամ Կ. Պոլսէ:
 Ու, Օսմ. կայսրութեան մէջ, հայկա-
 կան հարցը կրնայ ըլլալ ծագումը վըն-
 ոական միջադէպերուն:

Ասո՛ր համար է որ կառավարու-
 րիւնները կը նզնին զայն խեղդել, բնա-
 ջինջ ընելով նոյն իսկ հայ ազգը:

Կառավարողներն իրենց արհեստը
 կը բանին: Մենք ալ մերը բանինք.
 կառավարութիւնները պայծառ կը

սեանն, աչքերը բանանք կառավար-
ուածներուն:

Հայկական հարցն առաջին օղակն է
է շրջալի մը, զոր մենք կուգենք փակել
ամբողջովին: Պարկե՛ս մարդու մեր
պարսականութիւնը կը ստիպէ մեզ ան-
դապար պաշտպանել Ա.պս-Իւլ-Հա-
միսյն գոհերուն դասը: Յեղափոխա-
կանի մեր երազները՝ նախ ուժգին գոր-
ծողութիւն մը կը թելադրեն աւելելի
մէջ: Երբ այսպէս մեր խիղճը միան-
գամայն ամեն կերպով գոհացնելու
բաղդատարութիւնն ունինք, ո՞նի՛ր է
չ'օգտուիր:

Յայրայեղ վսանգներէն ու փոր-
ձանքներէն, երկարատե սարսափէն,
յուսահասութենէն երկչոս դարձած Հա-
յերը՝ լոկ դիւանագիտութեան վրայ
դրած են իրենց յոյսը:

Իրանագիտութիւնը կառավարու-
թեանց ու ասոնց պահպանողական
եահերուն գործակալը, հարկաւորապէս
իրենց թեմամի է: Որպէս զի դիւանա-
գիտութիւնն ընէր միջամտութիւնը, զոր
սպասելու միամտութիւնն ունին, պէ՛տ
էր որ Երոպայի կառավարութիւնները
բռնադատուէին անոր՝ ֆանի մը դէպ-
փերու ուժով:

Անոնց որ կը շահագրգռուին *այս
դէպքերն առաջ քերելու*.

Այս «դէպքերը առաջ բերելու»
համար, ի՛նչ ալ ըլլան ու ի՛նչ կերպ
ընթացք ալ որ բռնուի, աղբիւրներ
պէ՛տ է միշտ գտնել:

Հիմայ, Ասիոյ մէջ աղբիւր պէ՛տ
է, ինքնապաշտպանութիւն ուխտող հայ
ազգին բեկորները շինելու համար.
մարտիրոսներուն թոյլ սալու համար որ
չ'իյնան առանց վրիժառութեան. ըն-
ծայելու համար ֆաշարիներուն՝ իրենց
ժողովուրդին ու բոլոր ժողովուրդնե-
րուն դասին ծառայելու միջոցը: Անգ-
լիոյ, Գերմանիոյ կամ ուրիշ տեղի գէ՛նք
ու մթերք շինողները միշտ գիտեն անցը-
նել սալ ընտիր հրացաններ ու անթիւ

փանկուտեսներ բոլոր մաքսասուններուն
ու բոլոր ոստիկանութեանց մէջէն,
երբ իրենց կ'ապահովուի բառական
շահ մը:

Սակ, շահ սակ, ամեն բան
հո՛՛ս է.

Կան, աշխարհի մէջ, Հայեր որոնց
ֆով սակը չը պակսիր եւ որոնք ունին
շահ ու շահ:

Յօժարակամ կուտան ամսեկու հա-
մար — գաղտնապէս — իրենց եղբայր-
ներուն թշուառութիւնները: Հարիւրա-
ւոր հազար ժրանգներ կը ծախսեն, եր-
բեմն միլիոններ, սովրեցնել սալու ե-
րիտասարդ սարագիրներու երաժշու-
թիւնը, նկարչութիւնը կամ բժշկու-
թիւնը, մասակարարելու համար իրենց
դպրոցները, շինելու համար եկեղեցի-
ներ եւ դաւանակից ֆահանգներ սնու-
ցանելու համար:

Ո՛րքան ոսկիներ վասնուած, ո-
րոնք կրնային ծնել այնքան բարիքներ:
Նկարներով շեղագարդ եկեղեցիի մը ու
մօրուեղ կարգաւորի մը սարեկան ապ-
րուսին գնովը ֆանի՛ ֆանի *գարսայիկ*-
ներու ռումբեր կարելի էր անցընել
Զեթուն... կամ այլուր:

Հայ դրամատէրները որ չ'են ուզեր
ասի հասկընալ, իրենց անելի ազդեցիկ
հայրենակիցներէն պէ՛տ է համոզուած
ըլլային ասոր, ո եւ է՝ ապացոյցի
մը միջոցաւ:

Ու նախ՝ իրենց սեփական խղճին
շահուն համար: Զի գրեթէ եղբայրա-
պանութեան յանցանքը կը գործեն, չը
կասարելով իրենց բոլոր պարսակա-
նութիւնը հայ ազգն ազատելու համար:
Կ'իյնան միեւնոյն անպատուող մոլո-
րանքին մէջ, ինչպէս Ֆրանսան, մար-
թուած ժողովուրդին բնական պաշտ-
պանուհին, իրենց անձնական հանգր-
սութեան սիրոյն համար, կը սահին
կ'իյնան միեւնոյն ոմրին մէջ զոր Ֆե-
լիքս Ֆօրները, Հանօթօները, Լուպէնե-
րը, Նիփօլաները, Լամսոններն ու

Տէլգասէները կը գործեն ադամանդա-
կուռ շեմեաններուն ու քրական ու-
կիներուն սիրոյն համար:

ԻՒՌՊԷՆ ԿՕԷԻՅԷ

ԽՍՁԻ ՃԱՌԸ

(Շար. ԻԲ. քիւեն եւ վերջ)

Վերլուծենք հիմա քարոզին սքան-
չելի շարագրութիւնը:

Սրբազան Քարոզիչը կ'ըսէ.

«Այս խնդիրներուն վրայ աս չ'պիտի խօ-
սիմ, որովհետեւ խօսածներս հրապարակի
վրայ կը վիճաբանուին, լրագիրներու մէջ
կ'անցնին, կը խեղաթիւրուին: Առաջնորդը
սանկ ըսաւ, Առաջնորդը նանկ ըսաւ. սուս
սեղեկութիւններ, ժողովուրդին միտքը կը
պոստեն: Առաջնորդը այս կամ այն կուսակ-
ցութեան մարդը չէ', չէզոք է. ժողովուր-
դին մէջ պառակտում կայ, չ'վայելեք. աս
ի՛նչ ասօք, ի՛նչ յուսախաբութիւն է. . . .»

Ո՛չ ոք անշուշտ — բաց ՚ի Սրբ. Քա-
րոզիչէն, որ վերի բառերը բեմէն ար-
տասանեց — պիտի փափագէր տարա-
կուսի տակ զնեւ անոնց վաւերակա-
նութիւնը. հարցընենք ուրեմն.

Ո՞ր խնդիրներու վրայ շատ չը
պիտի խօսիք, Սրբ. Հա՛յր: Բնական
է թէ այս տասն ամսուան մէջ սերտե-
ցիք զանազան խնդիրները, որոնց վը-
րայ սակայն, շատ չը պիտի խօսիք.

Ինչո՞ւ.

Որովհետեւ հրապարակին վրայ
կը վիճաբանուին, եւն, եւն, եւն:

Լա՛ւ, թուե՛նք այդ անպատմելի
ու անիծեալ խնդիրներն իրենց առաջ-
նութեան կարգովը.

1. Սահմանադրութեան բռնաբա-
րումը, որուն անմիջական հետեանքն
եղած է արդի Առժ. Թաղ. Խորհուրդին
ինքնակազմութիւնը:

2. Ինքնակազմ Թաղ. Խորհուր-
դին ինքնակազմի ու փութկոտ սնորհ-
նութեամբ մը՝ տեղիս եկեղեցւոյս կամ
կաշտածներուն վաճառումը.

3. Ազգ. Երկ. վարժարանին մէջ
— Գահիրէինը զատ — Ձեր Սրբազանու-
թեան հոս սաք կոխելէն ՚ի վեր տիրող
անկարգութիւնը, վերջերս ալ, նորա-
կարգ ուսուցչական մարմինին խորհրդ-
դաւոր քաղաքապետութիւնը:

4. Իբրեւ եղբակացութիւն, տեղա-
կան ազգային կարգ մը կարեւոր գոր-
ծերուն աննախանձելի կացութիւնը:

Սակայն ինչո՞ւ այս վախը, սոս-
կումը հրապարակէն, ուր կարելի չէ
որ չ'վիճաբանուին հանրային խնդիր-
ները. ի՞նչ. մեր Սրբ. Առաջնորդը
կ'ուզէ որ ժողովուրդը չ'իմանայ, կո՞յր
մնայ, չը հասկնայ Առաջնորդարանին
— սխալեցայ — Աղեքսանդրիոյ Հայոց
Պատրիարքարանին կամ Խորհրդարանին
մեծ գործերը:

Բայց, կը խեղաթիւրուի՞ն եղեր իր
խօսքերը: — Ո՞ր խօսքերը. իր խուցին
մէջ քանի մ'երանելի հեղուկ որդեակ-
ներու առջև խօսածնե՞րը կամ փափսա-
ցածնե՞րը, թէ Տիար Միհրան Գալֆա-
եանի բնակարանին մէջ նորին Սրբազ-
նութեան փափագին ու առաջարկին
վրայ գումարուած ժողովին առջև
բարձրաձայն արտասանածնե՞րը
ո՞րը, կ'աղաչեմ, ինչո՞ւ չը ճշգր.
ո՞րը խեղաթիւրուած է. . . .

«Առաջնորդը այս կամ այն կու-
սակցութեան մարդը չէ', չէզոք է.» —
միայն թէ՛ տեղիս նորավերակազմեալ
Հնչ. կուսակցութեան մասնաճիւղի տը-
ուած էտէն Թատրոնի լսարանին նախա-
գահեց, ու այն անգամ փոխանակ եկե-
ղեցւոյ, Թատրոնի բեմէն խօսեցաւ հոն
հաւաքուած բազմութեան, ու նոյն իսկ
փափագ ալ յայտնեց որ յաճախեն
այդպիսի գումարումներ ու բանախօ-
սութիւններ: Նոյն Սրբազան Առաջ-
նորդնի՛ս է որ դարձեալ անցեալներն
իր նախագահութեան տակ կատարեց
բացման հանդէսը Գահիրէի Լսարան
Ընթերցատան ընկերութեան, որուն
անգամակցութիւնն ալ ընդունեց: Յե-

տոյ, նոյն Սրբ. Առաջնորդն է որ Գահիրէի Պատկ. Քաղ. Ժորովին բերնովը կը յայտարարէ թէ՛ Լսարան-Ընթերցատան ընկերութիւնը պահանջուած վտահուութիւնը չը ներշնչեր կարենալ տէր ըլլալու համար: հանգուցեալ Քլիւպի փոշեթաթաղ գոյքերուն, հոգ չէ՛ թէ նոյն Սրբ. Առաջնորդը, բացման հանդիսին առթիւ ըրած իր նախագահական բանախօսութեանը մէջ հանդիսաւոր կերպով ու ինքնաբերաբար, հայրական գորովանքի մը շնորով խոստացաւ այդ գոյքերը Լսարան-Ընթերցատան յանձնել որուն յարատե գոյութիւնն անհրաժեշտ կը գտնէր, իր զարգացուցիչ ու լուսաւորիչ դերին տեսակէտովը: —

«Ժողովուրդին մէջ պառակտում կայ, չ'վայելեր, առ ի՛նչ աւօթ, ի՛նչ յուսախաբուրթիւն է...»

Տեսէ՛ք, ի՛նչպէս կը յաճախէ ըզեղին մէջը Սրբ. Առաջնորդին՝ ուր, ուսկանը պառակտումին, որուն, գրգռող-բար, ոգին ի՛նք՝ Սրբ. Առաջնորդնիս՝ արմատացուց հոս:

Թէ ի՛նչպէս.

Առաջին օրէն ի վեր ո՛րքան բարի տրամադրութիւններ յայտնուեցան ժողովուրդին մէջէն, խնդրելով որ ինք հայտեցնել ջանայ հակառակ կարծիքները, որոնք գոյութիւն ունեցած են եւ ունին տեղիս քանի մը կարևոր անձնաւորութեանց միջև: Ասի՛ քանիցս կրկնուեցաւ իրեն. իսկ ինք, ամիսներուն գլուխները կ'սպասէր ակնապիշ պինդ բռնած ըլլալու համար ու պահելու իր պաշտօնին ամենագործնական հանգամանքը:

Ամէն գիմուսի Սրբազանը պատասխանեց այո՛, ու այդ աշոյին շուրջը լուսապսակ մը գծեց, հանրագործիւնը, զոր ինք առաջարկեց պատրաստել պատրաստուեցաւ, ըստ նորին Սրբազնութեան փափաքին, այն հանրագրութիւնը, որուն հետեանք մը սալէ

հետի, պառակտումի ու գայթակղութեան քարը դրաւ ինքը, ձգձգելով ու ձգձգելով. Տխար Մ. Գալֆանի բնակարանը ժողով կազմելով, Լն. Բանիմաց Առաջնորդ մը պիտի այլապէս վարուէր, պիտի անմիջապէս ձեռնարկէր քննելու այդ հանրագրութեան պարունակութիւնը, Ա.գ.գ. Առաջնորդարանին մէջ իր գահին վրայ...:

«Առ ի՛նչ աւօթ էն կը հասկնանք, բայց, «ի՛նչ յուսախաբուրթիւն է» ով ի՛նչ ասել ուզեց: Արդեօք Գեր. Այվազեան Սրբազան Եզիպտոսի վիճակը կ'երազէ՞ր եղեմական Իրախտ մը, ուր կը յուսայ թէ հանդարտիկ ու անհոգ սահէին իր ծերութեան օրերը...: Իրօք դառն յուսախաբութիւն մ'եղաւ իրեն այս պաշտօնը, թէպէտ և զերծ ըլլայ նիւթական մտահոգութենէ: Եզիպտոսնիս հարսւտ է հարուստ, ամեն բաներով:

Սակայն, եթէ վերլուծումը կատարեալ ու ամբողջ ընել ուզենք, «Փիւնիկի» սուղ էջերը չը պիտի ներեն, հետեալբար, խտայնենք:

Տաճկաստանի Աեթիւմիւն ա՛խը քաշեց Ս. Խաչին քարոզիչը. սրտին խորէն ու քթին ծագերէն միացող սև ա՛խ մը, որուն մէջ կը գալարուէին տխուր հոգեբանութիւններ. ա՛խ, ինչո՞ւ ըլլար այս երկրին մէջ ազատութիւն մամուլի, ազատութիւն խօսքի, ազատութիւն գործի, ամեն բանի: Ա՛խ, ինչո՞ւ ժողովուրդին բերնին ծամաց ըլլային վարչութիւն ու Առաջնորդ...: Ու այդ խորունկ ա՛խ ինչ յաջորդեց. «Ժողովուրդը յրագիրը կը կարդայ, զոր տեղը իր դրանը կուսայ» Լն:

Տարակոյս չ'կայ թէ այդ լրագիրը «Փիւնիկին է, որ կը քննագատէ Ձեր Սրբազնութեան ընթացքը: Փոխանակ ժողովուրդին պատուիրելու որ Լրագիրը չը կարդայ, խափանել տուէք Լրագիրը, որ սոս յարեւ կը հրատարակէ. բայց, հոս Թուրքիա չէ՛:

Ս. Խաչին փարեւու քաղաքակա- նութիւնը փայփայեցինք մենք դա- րերէ ի վեր, մինչեւ որ ազ- գային քաղաքական անկախութիւնը կորուսինք ու հիմայ, Սրբազանը նոյն շարականը կ'երգէ, իր սրբազան պաշ- տօնը բնորոշող շարականը: Սակայն Սրբազանը ինչո՞ւ կը մոռնայ Մեծ- Մարտիրոսը, որ Խաչ ելաւ յանուն մարդկութեան եւ եղբայրսիրութեան համար. ինչո՞ւ պառակտումի պատճառը մէջ տեղէն չը վերցնէր. ինչո՞ւ միու- թիւն ու հաշտութիւն բերելու ջանք մը չ'ընէր. . . :

Սրբ. Քարոզիչը խոստովանելով թէ Օրէնքը չը գործադրուի Տոս, գոր- ծադրութեան համար հետեւեալ միակ պայմանը կը դնէ. «պէտք է նախ ժո- դոյնորդը հանդարտի, խռոյնութիւն- ները դադարի. առանց այս պայմանին՝ օրէնք չը պիտի գործադրուի»:

Իսկ Մամուլը կ'ըսէ. Օրէնքը հաս- տատուած է իրաւունքները պահպա- նելու համար. հետեւաբար, հանդար- տութիւնը պիտի շուտով վերահաս- տատուի եթէ Օրէնքը գործադրուի. խռովութիւնները ծնունդ են օրէնքին ոչ — գործադրութեան. խռովութիւն- ները պիտի վերջանան, երբ օրէնքին գործադրութիւն սկսի:

ՄԱՄԼՈՅ ԲՍԺԻՆԸ

ՌՈՒՍԻՈՅ ՈՂԻՆ

Այս վերնագրին տակ՝ խիստ հե- տաքրքրական յօդուածով մը՝ Պ. Հէվ- Լօք էլիս՝ ճամբորդութեան մը միջո- ցին՝ Ռուսերուն և Ռուսիոյ իր վրայ թողած տպաւորութիւնները կը պատմէ Contemporary Reviewի Սեպտեմբերի թը- ւոյն մէջ: Պ. էլիսի գրութիւնը կրնայ բաւական որոշ դաշափար մը տալ այն երկրին, միջավայրին ու ժողովուրդի մասին, ուր և որոնց մէջ կ'ապրին մեր

այնքան հարազատները: Յօդուածա- դիրը թէև գէշ դաշափար մը կազմած ըլլալ չ'թուիր Ռուսիոյ վրայ, բայց անոր բնիկ ժողովրդին բարքերուն, բնաւորութիւններուն մէջ կը նշմարէ միշտ տգեղ և «բարբառութեան» մօտիկ բաներ մը:

«Ռուսական կեանքը, ռուսական բնաւորութիւնը յասկանող ամեն մէկ բան, կ'ըսէ նա, — ժողովրդին հիւրա- սիրութիւնը, իրենց նոյն սեղանները, զգեսներուն ու բնակավայրերուն շուրջ գոյները, շէնքերու հարսաւապետական այլանդակ անկապակցութիւնը, իրենց սպաւորութիւններուն գորովի եւ ան- գրթութեան խառնուածքը, իրենց ծայ- րայեղ անկեղծութիւնն ու յուզմունքը — ասոնք ամենը կ'ասարեալ տեսակէն բարբառուական են»:

Ռուսական տեսարանները, կը գրէ Պ. Հէվլօք էլիս, անվերջանալի են և իրենց յատուկ սքանչելի գեղեցկու- թիւն մ'ունին: Ու Ռուսերը՝ հակառակ եւրոպայի ամենահամակերպող ազգը լինելուն՝ զուարթերես են միշտ ու ի- րենց ճակատը մուսայլած չ'են տեսներ երբէք: Այնչափ անհոգ են անոնք, անտարբեր ու անզգայ որ մինչև ան- դամ իրենց ապրելու եղանակը չ'հե- տաքրքրէր զիրենք:

«Իրա է թէ, կը շարունակէ Con- temporaryի Պաս. յօդուածագիրը, Ռու- սիոյ ժողովուրդը եւրոպայի բոլոր ազ- գերէն ամենէն շատ համակերպող է բաղդին, բայց անոնցմէ նուազ անհոգ, նուազ գուարբարոյ չ'է: Ի՞նչ ստոր կերպով ալ պէտք ըլլայ համակերպիլ, կը գիշանի Ռուսը եւ մեծ քաջութեամբ կը հանդուրժէ այդ կրաւորական հա- մակերպութեան»:

Գրեթէ հսկայի չափ խոռը, զօ- րաւոր ու առողջ, խնդուն ու բարեղէմ Ռուսերը՝ մարդիկ ու կիներ՝ պայծառ ու գեղեցիկ տեսքով, իրենց տեսական մտքով զգեսներուն մէջ, միշտ պար-

գութին մը, անկեղծ պարկեցութիւն մը, ջերմեռանդութիւն մը, եւ կասարեալ բարեսրտութիւն մ'ունին կարծես: Իրենց ազատութեան նկատմամբ անզգայ ըլլալու չափ անսարքեր են ու իրենց գերութեան գիտակցութիւնը արժայատրող բառ մը, նշան մը չ'ես լսեր կամ տեսներ իրենց բերնին մէջ կամ դէմքին վրայ: Ազատութիւնը յարաբերական բառ մ'է միշտ անուշ, եւ ինչ որ ազատութիւն է մէկու մը համար, ուրիշ մը համար նոյնը չ'է: Եթէ, սակայն, ինծի հարցուի, ես Ռուսաստան չ'եմ բնակիր: Ինքնագիտակցութիւն ունեցող մարդու մը համար ազատ երկիր մը չ'է Ռուսիա, ու նշանաւոր ինքնագիտակցողի շատ քիչ կան հոն: Հասարակ Ռուսիացի մը իրեն գործի քաջանակին մէջ կրնայ ազատէն աշխատիլ, անանց սակայն ընկերական կամ կանաւարական խնդիրներու խառնուելու:»

Գալով Ռուսական սովորութիւններուն, յօդուածագիրը կ'ըսէ. —

«Լոգանքը ամենամեծ վայելքն է Ռուսիացիին համար. սա ոչ միայն բաղնիքներով — որ խիստ շատ կան Ռուսիոյ մէջ եւ ամենավար դասակարգի համար անգամ բաց են — չ'գոհանար, այլ կը իմէ յանախ անտուան բացօթեայ լոգանքներուն գոր կը կասարէ երբեմն հարոնական համարձակութեամբ: Արբունքին հասած, չափահաս աղջիկ մը Մոսկուայէն դուրս համբուն յարակից առուի մը մէջ անաւօթաբար կը լուացուէր, անանկ պաղ արիւնութեամբ մը որ ոչ ոք կը տեսնէր զինք կարծես: Ես ասիկա այժուս տեսայ, այն ալ անտանային ժողովրդական տոնի օր մը, երբ՝ առանց դասակարգի խտրութեան՝ երկուս գիւղացիները շոգեկառնին մէջ լեցուած էին: Կասկած չ'կայ թէ Ռուսական կեանքի պայմանները շատ աղտոտ են: Աղտոտութիւնը, սգոտութիւնը, ցուրտը, լաւ գոցուած սենեակներ ունենալու եւ շատ հազուադէպ հազնելու պէտքը՝ պայմաններ են որ կ'արժարեն աղտոտութիւնը՝ նոյն իսկ Ռուսիացիներէն նուազ համակերպողի խառնուածք ունեցող ժողովրդի մը մէջ:»

Ռուսը՝ հակառակ դեռ իր մէջ ունեցած այնքան բարբարիկ բարբերուն, բնաւորութիւններուն ու սովորութիւններուն՝ ունի մի քանի յատկութիւններ որոնք գրեթէ չ'կան արեւմուտքի մէջ: Անքաղաքակիրթ, կէս-վայրենի ազգաց մէջ քաղաքակիրթութիւն մտցնելու միակ կարող մարդը, missionnaireն է ան. ու իր այդ դերը Ս. Գիորգի բեմէն անդին չ'անցնիր ի հարկէ: Ս. Գիորգի արքայն է սակայն, որ քաղաքակիրթեան մէջ մեծ կշիռ ունի և որ կրնայ մեծ ապագայ մը խոստանալ Ռուսիոյ համար: Պատ. Յօդուածագիրը շարունակելով իր սպասարկութիւնները.

«Բայց, կ'ըսէ. Արեւելի այդ բարբարոս ազգաց վրայ — որոնք Եւրոպական տիրութեանց ձեռքին տակ չ'են եւ որոնք ինքզինքնին բաղախակրթելու նշան մ'անգամ ցոյց տուած չ'են ցարդ — Ռուսիա միայն կրնայ տիրել. անոր գործն է այդ. թէն սոսից է որ Ռուսիա դեռ հասած կամ բարձրացած չէ ոչ Արեւելի կամ Արեւմտի, ոչ Չինաստանի կամ Ֆրանսայի բաղախակրթութեանց: Ռուսիացիին՝ իր կեանքին ու վարքին մէջ ունեցած բարբարոսական սարբեր, ինչպէս նաեւ իր արիւնքին մէջ գտնուած ասիական հուժկու կորովն է որ կարող ըրած են զինք բնականապէս՝ ըստանձնելու այդ պարսականութիւնը եւ ներդաշնակօրէն խառնուելու այդ նուանեալ ազգաց հետ: Անգղիացիին չ'կրնար ընել այդ բանը: Ա. Տիտ գաս, Ռուսական ազգը միշտ մեծ ազդեցութիւն մը, մարդասիրութիւն մը, գաղափարական բարձր ձգտումներ եւ այդ ձգտումները գործնականին միացնելու այնպիսի ընդունակութիւն մ'ունի որ շատ անապահով սանի զինք: Այս բաներն են անկի, իսկ զօր ու ռազմ, որ բաղախակրթութիւնը առաջ կը բերեն:»


Ռուսական քաղաքակիրթութեան վրայ խօսելով — յօդուածին ամենահետաքրքրական հատուածը թերեւս — Պ. Հէվլօք էլլիս ցոյց կուտայ թէ խիստ

մեծ ապագայ մը պիտի ունենայ Ռուսիա և անոր տիրապետութեան սահմանները շատ պիտի ընդարձակուին: Պօլիսը, կըսէ նա, մոռնին է վերջապէս: «Ռուսական Ոգի»ին հեղինակը կը շարունակէ. —

«Ռուսական ազդեցութեան եւ կարողութեան սահմանը պիտի արածուի՝ անհրաժեշտաբար՝ Պօլիսէն դէպ ի նաղաղակալն Ռվիանոս եւ Արջայիճէն դէպ ի Աճղանիւսան: Ռուսիոյ այդ բնական ընդարձակման սահմանը ուրիշներ կրնան արբեր տեղերէ գծել, բայց գոնէ գլխաւոր գծերը ասանք են ապահովաբար: Նոյն իսկ հիմա ամբողջ Ասիան իր ձեռքին մէջն է, ու անկասկած, պիտի գայ օր մը — Չորդ դարը չ'վերջացած — որ ամբողջ աշխարհի Ասիական գերագոյն պետութիւնը պիտի նանչնայ գայն: Հաւանական չէ որ Ռուսիա Պօլիսէն անդին անցնի: Պօլիսը՝ բնականաբար՝ իրեն կը վերաբերի: Ճեմարիտ է ասիկա, եւ, Արեւմտեան կայսրութեան այդ մայրաքաղաքը իրեն ամենամոտիւրական ամանդութիւններուն աղբիւրն է թէ կրօնքի եւ թէ քաղաքականութեան տեսակէտով, եւ որուն ինքն է միակ յաջորդը: Ասկէ գաս Պօլիս բնական համբաներէն մին է ու դարէ մը ի վեր Սլաւ գաղթականութիւնը՝ հետզհետէ՝ այս երկրին մէջ հաստատապէս բազմանալու վրայ է: Եթէ Ռուսերուն վերջնականապէս Պօլսոյ տիրելուն ընդդիմութիւն մ'ըլլայ, արուեստական, շինծու եւ միւս ազգերուն նախանձին վրայ հիմնուած է, որովհետեւ տիրութիւններուն մէջէն ամէնէն շատ պահանջներ ունեցողը անոնք են, իր ներկայ պահանջատերէն գաս: Իրողութիւն մըն է ասիկա որ խնդիր չ'վերցնեն: Թէպէտ իրաւ է որ Թուրքին մայրաքաղաքը չ'ունի այժմ այն կարեւորութիւնը, արժէքը ինչ որ ունէր ասեմ մը, եւ, ամբողջ Միջերկրականը որ ժամանակաւ մարդկային քաղաքակրթութեան կեդրոնն ու աղբիւրն էր, հիմակ՝ կամաց կամաց կ'սկսի կորզուաւորջիկներն ու հնարարներն հե-

տարբերել: Պեղումներ կատարելու համար ընտր տեղ մըն է Պօլիս, ու ասկէ ետքն ալ ըլլալիքը աս է, որովհետեւ աշխարհի կեդրոնները Երջելու վրայ են եւ նաղաղակալն որ Ռուսիոյ, Ճարմի, Աւստրալիոյ եւ Ամերիկայի միջեւ կը գտնուի այսօր, պիտի ոռոգէ՝ առանց բացառութեան՝ աշխարհի ամենապզտիկ եւ ամենագորտուր քաղաքներուն արեւը: Միմակ Ռուսիան առանձնաւորհեալ պիտի ըլլայ՝ այս հողերուն վրայ՝ Եւրոպան ներկայացնելու: Եւրոպան Ռուսիոյ ներկայութեամբ միայն գոյութիւն պիտի ունենայ Խաղաղականին մէջ: Մենք, Եւրոպացիներս դէպի ապագայ Նոր Աշխարհը Ռուսիայէն պէտք երթանք եւ այս Նոր Աշխարհին մէջ մեր գլխաւոր շահերը՝ անոնց ձեռաց մէջ են անխուսափելիորէն»:

Պ. Հէվլօք էլիս Ռուսիոյ աշխարհակալութեան միակ մրցակից Միացեալ Նահանգները կը գտնէ և իրեն նկարագրած այդ ապագայ նոր պետութեան միակ արժանի և կարող յաջորդ՝ էլիզապէթ Լեւս, «Ռուս ժողովրդին հաւատարմ հանգանակ»ը: Contemporary յօդուածագիրը կը վերջացնէ հոս իր հետաքրքրական շահեկան յօդուածը: ՎԱՀԷ



ՔՐՈՆԻԿ

— Ժողովրդային Ազատ Համարարանի Յանձնախումբին անդամ կարգուեցաւ Ազն. Տիար Միհրան Գալֆաեան: Կը փութանք շնորհաւորել այս անուանումը, որ պատուաբեր է և օգտակար տեղիս հայ հասարակութեան. պատուաբեր՝ միջազգային «յգպիսի կարևոր հաստատութեան մը մէջ գլխաւորելու և՛ Հայ մը. օգտակար՝ եթէ տեղիս հայ երիտասարդութիւնը նոյն բարձր անձնաւորութեան անդամակցութենէն օգտուելով՝ յաճախել սկսի սոյն համալսարանը, որուն մուտքը ազատ է: Այս մասին յաջորդով պիտի գրենք աւելի մանամասնօրէն:

— Պաշտօնական լուստեղեակ շրջանակներուն մէջ կապահովեն թէ մօտ ատեններս Պօլտոյ Եւրոպացի դեսպանները, իրենց կառավարութեանց հրամանով, համաժողով մը պիտի գումարեն, Հայաստանի վերջին ծայր տագնապալից կացութեան մէջ բարւոքում մը մտցնելու համար:

Կը տարաձայնուի նաև թէ մեծ պետութիւնները, Հայաստանի համար կրէտէի համանման կացութիւն մը ծրագրած են, ազատելու համար զոյն թրքաց ձեռքերէն:

— 4. Պօլտէ կը հեռագրուի Վիէնանայի լրագրաց:

Վանայ Ռուսական զեր. հրւպատար Սասունէ կը հեռագրէ թէ Բիւրտերը քանի մը անգամներ ամենի կերպով յարձակեցան Հայերու վրայ:

Հայերը առիւծի պէս պաշտպանեցին ինքզինքնին և սակայն շատ մարդ կորուսին թշնամուոյն բազմութեան առջև:

— «Վիէննէր Թակէպլատ» թերթը Սօֆիաէ կիմանայ թէ պուլկար ապրտամբական խումբեր Մակեդոնիա կարչաւեն, պուլկար իշխանութեանց աչաց առջև:

— Վիտինի և Ռուսուքի պուլկար գործարանները մեծ քանակութեամբ ուղղամթերք և փամփուշտ կը ծախեն մասնաւորներու, որոնք մաքսանեն գութեամբ այդ ապրանքները Մակեդոնիա կը մտցնեն:

Աստեցմէ կերևի թէ, կը:է նոյն թերթը, պուլկար կօմիտէն վերստին սկսած է գործել ի Մակեդոնիա:

— «Լօքալանցայիլ» լրագիրը Պօլտէ կիմանայ թէ Սասունի Հայոց արդի վիճակը նոյն է, ինչ որ 1895ին:

«Թրքական զօրախումբեր Սասունը պաշարած են»:

Նոյն իսկ Մուշի մէջ մէկը չի գիտեր թէ Սասունի մէջ ի՞նչ կանցնի կը դառնայ:

Կը կարծուի թէ ողբերգական տրամներ և արիւնհեղութիւններ եղած են, քանի որ Սասունի մէջ շատ Բիւրտ կայ:

— «Հայաստանի մէջ զինուորական բոլոր գործողութիւնները Սուլթանին ուղղակի հրամանովը կը կատարուին»:

— Սուլթանը վերջին ծայր մտահոգութեան մէջ է:

Իր վախն այն է թէ մի գուցէ Փրանսա Ռուսիոյ Չարին հետ համաձայնութեան մը յանգի Թուրքիոյ դէմ:

— Վիէննայէ հեռագիր մը կը հաղորդէ թէ Հայաստանէն հասած լուրերը կիմացնեն թէ Սասունէ Մուշ տանող ճամբան ամբողջապէս գրաւուած է թուրք զինուորներէ:

— Վանէ կը հեռագրուի թէ ձիւլամէրկի մէջ արիւնհեղ ընդհարում մը տեղի ունեցած է Բրգերու և Նեստորականներու միջև:

Բազմաթիւ զինուորներ զրկուած են ձիւլամէրկի կողմերը:

— Խապայեան Սահակ Եպիսկոպոսը արդէն Ատանայ հասեր և ձեռնարկեր է Սոյ կաթողիկոսի ընտրութեանը:

ՇԱՐԺՈՒՄ

— Կիլիկիաի մայրաքաղաք Սիսի մէջ մինչև այժմ զօրանոց չկար: Սուլթանը հրաման հաներ է այնտեղ ալ յատկապէս զօրանոց մը շինելու, շինութեան ծախքը ժողովուրդէն հանգանակելով:

ԱՐՄԷՆԻԱ

— Պ. Տէլքասէ որոշած է գործել ի նպատակ Հայոց: Այդ մասին արդէն տեսակցութիւն մը ունեցած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Լամատորֆ Կոմսին հետ: Եւ ամենաստոյգ աղբիւրէ կը հաղորդեն թէ Պօլտոյ ռուսական դեսպանը Պ. Զինովիէվ, այդ տեսակցութեան հետևանքով որոշուած է Բարիզ կանչուիլ:

Պ. Զինովիէվի ի մօտոյ Բարիզ

երթալու լուրը ուրիշ աղբիւրներէ ալ հաստատուած է:

— Հեռագիր մը «Ռէօգըր»ի գործակալութենէն կ'ըսէ.

Խարբերդէ եկած արժանահաւատ տեղեկութիւններէ կը հաստատուի թէ այս վերջի Հայկական ջարդերը կարգադրուած են Թուրք-Քրդական գաղտնի ընկերութենէ մը, որ կը յուսայ թէ Եւրոպան ջարդերէն յուզուելով միջամտութիւն ընէ ու բարեկարգէ այժմու օսմանեան վատ կազմակերպութիւնը: Այդ ընկերութեան կեդրոնատեղին է Պիթլիզ:

— Չարին տեսակցութեան միջոցին Մ. Լուպէի հետ, Հայկական խնդիրն ալ մէջտեղ բերուեցաւ, և Ռուսիա որ ժամանակին, այսինքն կոտորածներու ատեն, ազգու միջամտութիւններու արգելք եղաւ, այսօր կը յայտարարէ թէ այլ ևս անկարելի է որ նոր պայթուածներու դէմ անտարբեր մնայ և թէ Հայերը երկու ճամբայ ունին ընտրելիք — կամ Ռուսական պաշտպանութեան տակը մտնել և կամ մնալ ներկայ անտանելի կացութեան մէջ:

«Թայմզ» աւոր վրայ երկար խմբագրական մը նուիրելով կըսէ թէ Ռուսիոյ Չարին կողմանէ Հայոց եղած առաջարկութիւնը այսինքն «կամ Ռուսիոյ պաշտպանութեան ներքեւ մնալ և կամ ներկայ վիճակին մէջ շարունակել» Հայոց համար դժուար ընտրութիւն է. ընտրութիւն մը, որ եթէ նոյն իսկ ընէին, շատ մը դժուարութիւններու կարող է առաջնորդել զիրենք:

ԻՐԱՆՈՒՆԻ

— ՖՐԱՆՍԱՆ ԵՒ ԹՈՒՐԿԻԱՆ. — Թայմզ ամսոյս 6 ի հեռագրէ մը կը տեղեկանայ թէ՛ Քրանդէթուրք վէճը կ'սպառնայ կնճռոտիլ. Քրանսական կառավարութիւնը՝ Լորանտոյի պահանջին կարգադրութեան վերաբերող

թրքական առաջարկը ո՛չ միայն չ'ընդունիր, այլ և ամբողջ գումարին անմիջական վճարումը կը պահանջէ. պայման մը՝ որ չ'էր սպասուեր:

Գանք հիմայ ոչ, կ'ըսէ Թայմզ Սամ. գանձին ներկայ ահռելի տագնապը գրեթէ անկարելի կը դարձնէ այդ կարևոր գումարին վճարումը, մինչև որ Դուռը փոխառութիւն մը չ'ընէ:

Թուպինիի պահանջին կարգադրութիւնը գեռ չ'կնքուեցաւ. մինչդեռ անդին կը դժուարանայ Ատաբազարի ճահիճները գնելու համար որոշուած գումարին վճարումն ալ, որ կայսերական իրաւեցով մը հաստատուած էր, Պ. Գոսգանի մեկնելէն առաջ:

— ՄԱՆԱՍԹՈՂԻ Քրանսական փոխհիւպատոսին վրայ Թուրք զօրքեր յարձակեցան. ասոնք ձերբակալուեցան ու հրամանատարը ներողութիւն խնդրեց:

— ՁԻՆՈՎԻՆՎ Երկայն ունկնդրութեան մը մէջ նեղը դրաւ Սուլթանը՝ պատժելու համար Մուշի մէջ Հայերն սպաննող Քուրտերը. խօսեցաւ նաև Հին Սերպիոյ կացութեան ու ֆրանդէթուրք վէճին վրայ:

— ԴԱՒԱՆԱՓՈՒՍԻՒՆԸ Հայկական նահանգներուն մէջ. — Պիթլիսի նահանգէն բազմաթիւ Հայեր ուստական պաշտպանութիւնը վայելելու համոզումով յունադաւանութիւնը դըրկած են:

— ՔՈՐՏԵՐ շատ դժգոհ են նոր նոր զօրանոցներու շինութիւններէն, որոնք կը կատարուին Սասունի շրջակայքը, այն կողմերու հայ բնակչութիւնը բնաջինջ ընելու նպատակով:

— Տընի Դօշէն Բարիզի մեծանուն հայասէր երեսփոխանը, իր մօտակայ հարցապնդումին առթիւ, զօր պիտի ընէ Խորհրդարանին վերամուտին, Արտաքին գործերու Պ. Նախարարին, նամակ մ'ուղղելով Քրօ Արմէնիայի, մտադրութիւն կը յայտնէ, իր այդ

հարցապնդումին մէջ, ճանրանալու մանաւանդ վերջերս Սասուն ու Մուշ կրկնուած խժգժութեանց վրայ, որոնք միևնոյն վայրերուն մէջ գործուեցան 6 տարի առաջ: Այդ նամակով զգայուն ել կուտայ թէ՛ Հայաստանի կայութիւնը ծանր է. թէ Ծրանսա չը պիտի բռնէ կենայ քարափները, Լօրանտօն ու Թուպինին, այլ թէ՛ պիտի ընդլայնէ իր պահանջումներուն շրջանակը, 'ի հարկին, ճնշում 'ի գործ դնելով Սուլթանին վրայ, արգիլելու համար շարգերուն վերադարձը, եւ Հայերուն համար բանալու նոր թուական մը:

— Տիար Հ. Առաքելեան, Կլասոգոի Գօնկրէին «Հայկական Խնդիրը» վերնագրով մատուցած իր տեղեկագիրը կը վերջացնէր սոյն եզրակացութեամբ.


«Կաղաչենք որ Խաղաղութեան տիեզերական Խ. Գօնկրէին ընէ այս որոշումը. «Կը խնդրէ Եւրոպայի Տէրութիւններէն Լահէ գումարել պաշտօնական գետպանխորհուրդ մը Հայկական Խնդիրը լուծելու համար 1895ի Մայիսին բարենորոգումներու ծրագրին գործադրութեամբը:

Արդ, կը հաւաստուի թէ՛ այդ Դեսպանխորհուրդը մօտերս պիտի դումարուի:


Հետեւալը կ'արտասպենք Ամերիկայի Պօսթըն քաղաքին «ԿՈՉՆԱԿ» քաբաթաթերթէն, որուն ըրած գնահատումը կը նկատենք մենք իբր քաջալերանք, զոր սակայն շահեկանութենէ գուրկ չ'ենք զսներ:

Ու եզիպսաբնակ հայութիւնը թո՛ղ միանգամ ընդ միտ համոզուի թէ «Փիւնիկ»ի մղած պայքարը զոս ազգային շահերը կը շօտափէ, արհամարհելով ամեն անհասական նկատումներ, եւ լիավստահ՝ վերջնական յարանակին:


«Փիւնիկ», ԵՒ ԻԻՐ ԳԵՐԸ



Եզիպսոսի մէջ, յԱղեքսանդրիա, սկսած է վերերեւիլ «Փիւնիկ» ազգային շարաթաթերթը: Այս առթիւ մեր սրտագին շնորհաւորութիւնները կը յայտնենք այդ արի թերթին Պատ. Խ Բագրութեան և վարչութեան: Հաճութեամբ կը դիտենք այդ փոքր թերթին մղած մեծ պայքարը ազնուպետական ձգտումներու դէմ և լիայոյս ենք թէ, հակառակ տեղական բացառիկ գժուարութեանց, պիտի յարատեւէ ան իւր եռանդուն ու գերօտակար դերին մէջ և պիտի յաջողի Աղգ. Սահմանադրութեան ոգին յարգել տալ և ստեղծել հանրային կարծեաց մէջ իր պարտուց և իրաւանց այնպիսի դիտակցութիւն մը որ նեղօսի արհամարհ վրայ, այդ յարաճուն Հայ դաղութիւն մէջ, ամիրայական բարքերը ջնջուին և անոնց շահարկիչ փայփայողները ազգային ասպարէզէն հեռացուին:



ՍԵՒ ԱՄՊԵՐԸ



Երբ կը դիտեմ արշալոյսը հրափառ,
Ժպիտ մ'հարսակ՝ որ սարածուի չորսրդիկ,
Որ կեսնք կուսայ ծառիկ, ծաղիկիկ, ծիծառիկ,
Յաւով մ'անկեղծ աչերս վեր կը յառիկ.

Յիշելով սե՛ւ արկերը:

Երբ կը դիտեմ ծովը խաղաղ՝ ի՛նչ աղւոր,
Որ զեփիւռիկ հետ խայտալով կը խաղայ,
Միևն աշտակներ կը վիտարսան իր վրայ,
Վեր չեմ նայիր, սիրս աշնքան կը զողայ,

Յիշելով սե՛ւ արկերը:

Երբ կը դիտեմ նակասն անբիծ մի մանկան,
Որ չ'գիտեր դեռ, սառապակն ու ցաւեր,
Որ չոկ գուարթ, միշտ գոն ըրալ կը սիրէ.

Տխուր ժպտով կը յառեմ ես աչերս վեր,
Յիշելով սե՛ւ անպերը:

Երբ հանդիպիմ երբեմն մարդոց, որ աւա՛ղ,
Խաբուած բաղդին մի կեղծ ժպտեն՝ կը
կարծեն,

Թե այլ եւս պիտի չ'գգան ցաւ ու վիշտ,
Իմ աչերըս վե՛ր երկինքը կը դիտեն,
Յիշելով սե՛ւ անպերը:

Եւ երբ, երբեմն յո՛հած զխուր ներկայես,
Ապագայիս երազներուն մեջ բաղուիմ,
(Աւաղ, մի՛թե ապագայ չ'եր ներկան ալ,) Սարսուռով մը ես երկինքին կը նայիմ,
Յիշելով սե՛ւ անպերը:

Իսկ երբ կ'ըսեն թե մահուրնե՛կ վերջ աչերս,
Երկինք բռնե՛ն մեր հոգիները բարի.
Այ պիտ կրնանք հոն երջանիկ ըլլալ միշտ,
Զ'եմ հաւատար, նայուածքս վեր կը յառի,
Յիշելով սե՛ւ անպերը:

* * *

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ

Մամուլը՝ ընկերային աշխարհին
լոյսն է, եւ ուր որ լոյս կայ՝ հո՛ն կայ
նաեւ նախախնամութեան մասը:

Ով որ իրաւունք ունի՝ զօրաւոր է,
Եւ ո՛վ որ զօրաւոր է՝ կ'արհամարհէ
բռնութիւնը:

Իյնալ՝ բայց առանց գողալու՝
ա՛յս իսկ է յաղթանակը:

Խաղաղութիւնը փաղափարքու-
թեան առաքինութիւնն է, իսկ պատե-
րազմը՝ ոճիրը:

(Վ. ՀԻԻԿՕ)

Յաղթութեան ջիղը դրամն է:
(ՆԱԲՈՒԷՆՆ Ս.)

Առանց բարի գործերու գիտունը՝
նման է առանց մեղրի մեղուի: Ըսէ՛ք
այդ վասթար ամբարսաւան անձին,

բանի որ մեղր չ'ունիս, ազատէ՛ մեզ
բու խայթուածքներէդ: (ՍՍՍՏԻ)

Օրէնքին հակառակիլը՝ ո՛չ հնա-
րաւոր է եւ ո՛չ պէտք. օրէնքն ամեն
ազգի եւ աշխարհի մէջ անողոք է:
(Պ. ՊՌՕՇԵՍՆՑ)

Ամեն սեղ ուր մեծ հոգի մը մար-
մին կուտայ իր մտքին, առաջ կուգայ
Գողգոթա մը: (Հ. ՀԱՅՆԷ)

Քննադատութիւնը այն զօրաւոր
լծակն է, որ հասարակական կեանքի
անիւր սեղից շարժում եւ պարս ու
պատեան ուղղութիւն է տալիս նորան:
(Ս. ՊԱՂԱՍՍՆԵՍՆ)

Վիճար լաւ բան է. այն ազգը որ
վիճո չունի, ո՛չ առաջդիմութիւն ունի
եւ ո՛չ փրկաւէտ ապագայ: Քաղաքա-
կրթութիւնը վճի հետեւանքն է:
(Ս. ՇՍՀԱԶԻԶԵՍՆՑ)

Կովերը արծիւներ կը դառնան՝
երբ խնդիրը շահու վրայ է:
(ՎՈՂԴԷՌ)

Օր մը որ կ'անցնի առանց ազգիս
ծառայելու, կեանքէս արտախուծ օր
մըն է: (ԶՕՐԱՎԱՐ ՏԸԶԷ)

Մարդ ո՛րչափ ծառայութիւն մա-
տուցանելու մօտ ըլլայ, ա՛յնքան աւելի
ապաստելու է նախասուելու:
(Ե. ՏԷՄԻՐՃԻՊՍՇԵՍՆ)

Ուրիշներու բաղդաւորութեան հա-
մար աշխատելով՝ մեր սեփական բաղ-
դաւորութիւնը կը պատրաստենք:
(ՊԼԱՏՈՆ)

Քաղաքաւար եւ նեմարտութիւն յա-
ռաջ կը վարեն աշխարհը, եւ անոնք
որ ասոնց կը ծառայեն՝ մարդկութեան
նեմարիտ բարեկամներն են, թէպէտ յա-
նախ նաեւ զոհերը:

(Ռ. ՊԷՐՊԷՐԵՍՆ)

Ո՛վ որ նկարագիր չ'ունի, մարդ
չէ, իր է: (ՇԱՆՅՅՈՒ)

ՅԱԿՈՒԻԿ Կ. ՇԵՐԷՄԷԹԵԱՆ


Ամսոյս 12ին շաբաթ օրը, Ս. Պօղոս Պետրոսի քանարին մէջ տեղի ունեցաւ յուղարկաւորութեան ժողով հասնելու վաղամեռիկ Յակոբիկ Կ. Շերէմէթեանի, որ 14 զարուհներու ծաղիկ հասակին մէջ բաժնուեցաւ իր անվիրաբար ծնողքին գրկէն: Տանարին մէջ, մահաբեմին երկու կողմը շարուած էր երկսեռ աշակերտաց երամբ: Գեղ. Սրբազան Առաջնորդը կը նախագահէր, Երչապատուած եկեղեցական դասէն: Խոն երկսեռ բազմութիւն մը, վարժարանին ուսուցչական մարմինը, հոգաբարձութիւնը, ներկայ էին ժողով արարողութեան: Տանարին դուրսը, գաւթին մէջ, դարձեալ երկու շարքի բաժնուած երկսեռ աշակերտներուն եւ ուսուցիչներուն մէջէն դանդաղաբաշխաւորացաւ դագաղը դէպ ՚ի գերեզմանատուն, ուր ամփոփուեցան վաղաքառամ Յակոբիկին նեխարները:

Շերէմէթեան ընտանիքը շնորհալուծութիւն կը յայտնէ բոլոր ազգականաց ու բարեկամաց որոնք ներկայ գտնուեցան ողբացեալ Յակոբիկի յուղարկաւորութեան ու բաղման հանդիսին:

Մեր ամենախորին ցաւակցութիւնները յայտնելով դժբաղդ որդեկոտոյս ծնողքին, համբերութիւն եւ մխիթարութիւն կը մաղթենք:

ԲԱՅՈՒԱՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ԱՐՏԷՄԻՍ» Ի



1902 Յունվարին Գահիրէի մէջ կըսկսի լոյս տեսնել ԱՐՏԷՄԻՍ ամսական հանդէսը ընտանեկան եւ գրական ուղղութեամբ:

ԱՐՏԷՄԻՍը կը բաղկանայ 4 տպա-

գրքական պրակներէ (32 մեծագիր եւ երկսիւնակ եջեր):

ԱՐՏԷՄԻՍի հրատարակութիւնը կը լինի մաքուր թղթի վրայ եւ շատ կանոնաւոր. իւրաքանչիւր ամիսու առաջին օրը լոյս կը տեսնէ մէկ թիւ: Տարեկան կուտայ տասներկու թիւեր:

ԱՐՏԷՄԻՍի բաժանորդագրութիւնը կը լինի ԲՍՅԱՐՁԱԿԱՊԷՍ ԿԱՆՏԻԿ:

ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ

Տարեկան՝	Ղրջ. ողջ	40
Վեցամսեայ՝	»	» 25

ԱՐՏԱՍՍՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան՝	Փրանք	12
----------	-------	----

Սոյն յայտարարութիւնը տալով «Փիւնիկ»ի ընթերցողներուն՝ գեղեցիկ առիթը կը ներկայանայ մեզի շեշտելու մեր Ազգային ընտանեկան բարոյականի կենսական ու անզանցառելի պէտքերէն մին, որուն պակասը ժամանակին զգացուցած էին Հայոց հայրիկն իր դրախտի ընտանիքով ու հայ գրական գեղեցիկ դէմքերէն յաւէտ ողբացեալ Տիկին Տիւսար իր մէկէ աւելի վէպերով:

Այդ պակասն է ահա՛ զոր կը խոստանայ լրացնել Տիւսարի հաւատարիմ եւ տաղանդաւոր սանուհին Օր. Մառի Պէյլէրեան իր ԱՐՏԷՄԻՍ ամսեայ հանդէսով, որուն պիտի սկսի հրատարակութիւնը 1902 Յունվարին:

Սրտանց յաջողութիւն մաղթելով այս աւետեալ Հանդիսին, կը սիրենք յուսալ թէ անի ամենուն, մանաւանդ իրական սեռին կողմէն փափաքուած ընդունելութեան ու համակրանքին պիտի արժանանայ, անխոտոր ընթանալով բնականաբար իր կանխագծած ուղիէն, որուն պիտի հետեւի անշուշտ համոզուած ուխտաւորի մը ջերմեռանդութեամբ: ԱՐՏԷՄԻՍի նպատակով ու կատարելիք գերով պիտի գրադի «Փիւնիկ» իր մտտակայ թիւերէն մէկուն մէջ:

ԲԱՆԱՍԷՐ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ



«Բանասէր» յարգելով ժողովրդական և գրական անձանց գիմումները, կը խոստանայ յառաջիկայ տարեշրջանէն (1902 Յունուար) սկսեալ՝ հետեւեալ նոր ծրագրով հրատարակուիլ.

Ա. «Բանասէր» նախ պիտի հրատարակէ ազգային յառաջգիմութեան վերաբերեալ խմբագրական տեսութիւններ.

Բ. Բանասիրական յօդուածներ՝ ազգային պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ.

Գ. Օտարազգի նշանաւոր հանճարներու գրուածոց թարգմանութիւններ.

Դ. Հայ աշխարհագրական և ազգագրական յօդուածներ.

Ե. Նոր հրատարակուած գրքերու վրայ քննադատական տեղեկութիւններ.

Զ. Լեզուաբանական և ստուգաբանական յօդուածներ.

Է. Ազգային լրագրութեան մէջ տեսնուած կարևոր յօդուածներու վրայ գիտողութիւններ.

Ը. Գիտական նորութիւններ:




Մասնաւոր կերպով կ'ը յայտարարենք մեր ընթերցողաց որ Յունուարէն սկսեալ «Բանասէր» վերոյիշեալ ծրագրով ԱՄՍԱԹԵՐԹԻ պիտի վերածուի, իւրաքանչիւր անգամ տալով 32 էջ: Եւ ինչպէս որ կանխաւ խոստացեր էինք, «Բանասէր»ի ինչ ինչ յօդուածները պատկերազարդ պիտի հրատարակենք:

Թերթին գինն առ այժմ նոյնը կը մնայ, այսինքն՝ տարեկան 15 Փր. — 6 ռուբլի. բայց եթէ բաժանորդներու բազմութիւնն զմեզ խրախուսէ՝

այն ատեն կը խոստանանք 10 Փրանքի իշխցնել:


Կը խնդրենք խոնարհաբար մեր պատուական պաշտօնակիցներէն՝ որ բարեհաճին իրենց թերթին մէջ հրատարակել մեր ներկայ ծանուցումը:

Մեր հասցէն է՝ Basmadjian
112, Bd. Rochechouart.
(Paris 18)



ՇՐՋԱՐԵՐԱԿԱՆ

Ի ՆՊԱՍՏ ՅԱՅ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ



Մեծարոյ Տ.

Ամէնքին յայտնի է թէ ի՞նչ աննախանձելի վիճակի մէջ են գտնուում հայկական անդին հնութիւնները.

Ամէնքը գիտեն թէ ի՞նչպէս մինչև այժմ ոչնչացնում էին և ոչնչացնում են մեր պատմութեան դարաւոր և թանկագին յիշատակարանները:

Եւրոպական ազգերի մօտ երբեք մենք չենք գտնի այդպիսի անխիղճ ապերախութիւն դէպի նախնիքներից մնացած աւանդները, այլ ընդհակառակը՝ նախնեաց հնութիւնները ամենապատուաւոր տեղն են դրաւել նրանց համար յատուկ թանգարանների մէջ, իբր կենդանի վկաներ նոյն ազգերի անցեալ դարերում գոյութեան: Այդ դարաւոր վկաները նրանց ազգային հպարտութիւնը, պարծանքն են կազմում:

Գիտնական հետաքոտութիւններով զբաղողներին ծանօթ է թէ Պարիզի և Բեռլինի Ակադեմիաներն հրատարակած են արդէն սեմական ազգերի յատուկ լեզուներով, նոյնպէս և լատին և յոյն լեզուներով գտնուած բոլոր արձանագրութիւնները, մասնաւոր ժողովածուների (Corpus) մէջ ամփոփած. այնպէս որ նոյն ազգերի պատմու-

Թեամբ զբաղող մէկը կարող է առանց
դժուարութեան իր առջև ունենալ նոյն
ազգի յատուկ արձանագրութեանց ամ-
բողջութիւնը: Իսկ մենք չունինք մի
այնպիսի ժողովածու: Աւստի՝ մեր ոյ-
ժերի ներածին չափ պէտք է թէ՛ բա-
րոյապէս և թէ՛ նիւթապէս օգնենք
նոյն ուղղութեամբ մի աշխատութիւն
պատրաստող անձին:

Աչքի առաջ ունենալով մեր հնու-
թիւնների վիճակը, Պարիզի մի խումբ
Հայեր կամենում են դոնէ պաշտել
կորստից այն ինչ որ կարելի է:

Ամէնքին հասկնալի է այդ ձեռ-
նարկութեան կարևորութիւնը և օգտա-
կարութիւնը. սակայն ամէն մէկն էլ
գիտէ թէ ի՞նչ ծանր աշխատանքների
և նիւթական զոհողութիւնների կարօտ
է մի այնպիսի գործ:

Բարեբաղարար մենք ունինք մի
այնպիսի մասնագէտ, պ. Կ. Յ. Բաս-
մաշեան, Պարիզի Համալսարանում ու-
սած, որը պատրաստ է ամէն տեսակ
զրկանքներ կրել և աշխատել այդ դա-
ղափարի իրագործման համար:

Նոյն գիտնականը Վեհ. Կաթողի-
կոսի առաջարկութեամբ արդէն մի-
անգամ յաշող կերպով կատարած է
մեր և իր բազմանքը:

Մի փոքր գաղափար տալու հա-
մար կատարուելիք աշխատութեան ու-
րին ձեռնարկել է Պ. Բասմաշեան,
բաւական է յայտնել թէ՛ երկը պիտի
կրէ ՀԱՅՍՏԱՆ անունը և պիտի պա-
րունակէ մեր բոլոր շէն և աւեր յի-
շատարակարանների — վանքերի, բեր-
դերի և աղբային ամեն տեսակ հնու-
թիւնների, գեղարուեստական ու մա-
նուանդ ճարտարապետական մնացորդ-
ների, հին արձանագրութիւնների և
ձեռագրաց — իսկախայ պատկերները,
հանդերձ մանրամասն տեղեկութիւն-
ներով, հնախօսական ու պատմական
ծանօթութիւններով և արձանագրու-
թիւնների տողը, անթերի հրատարա-
կութեամբ:

Կատարուելիք ուսումնասիրու-
թիւնների այն մասերը որ կրնան եւ-
րօպացիներն էլ հետաքրքրել և մեր
ազգի փառաւոր անցեալը հաստատել
գիտնականների առջև՝ Պ. Բասմաշեան
պիտի հրատարակէ Փրանսերէն լեզուով
ևս, ինչպէս արդէն կատարած է նոյնը
սրանից առաջ:

Այժմ, Մեծարոյ Տ. . զգալով նիւ-
թական միջոցների պակասութիւնը այդ
գործի շարունակութեան համար, դի-
մում ենք Ձեզ օգնել մեզ Ձեր ոյժերի
չափ: Մեզ հարկաւոր է միայն հազար
(1000) ուլրի, որի մի փոքր մասը
հաւարում է մեր մէջ:

Ձեր նպատը խնդրում ենք ու-
ղարկել մեր Պ. Գանձապահին (PARIS.
36, rue de La Tour-d'Auvergne. Mr. J. Is-
kender):

Նուիրատուների անունները եւ
հաշիւները մանրամասնաբար կը հրա-
տարակուեն «L'Arménie»ի և «Բանասէր»
ի մէջ:

Յիշեալ խմբի կողմից
ՄԻՆԱՍ ՉԵՐՍՁ ՍԻՒՔԻՍՍ Վ. ՊԱՐՈՆԵԱՆ
ՏՕԲԹ. ՍՐԳԸԵԱՆ

ՔՆՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԿ Բ. Ի ԵՒ ԱՆՈՐ ՊԱՊ ՈՐԳԻՈՅՆ
ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ
ՈՂԲՈՅԵԱԼ ԳՐԱԳԵՏ ԵՂԻՍՁՍԻ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ

Ազգ. Պատմութեան մէկ կարեւոր
կէտը լուսաբանող խիստ շահեկան պա-
րունակութեամբ սոյն գիրքը. 1998^o
էջերով որ լոյս տեսած է Հայկական
«Արաք» Տպարանէն կը ծախուի թրդ-
թատարի ծախքով 2¹/₂ Ֆր.ի:
Գնել փափագողք կրնան գիմել
հետեւեալ հասցէին.

Imprimerie Arménienne L'«Arax»
ALEXANDRIE EGYPT

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն
Ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 Ֆրանկ

Սմեն կէրոյ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու դէմ.

Դիւրամաւելի գներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիւզոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՖԱՆԱՆ

Աղեփասանորիս, պզտիկ Մենշիե Ապուսարսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 Ֆրանկ

ԴԵՂԱՐԱՆ ԱՓՐԻԿԵԱՆ

PHARMACIE D'AFRIQUE

Սոյն միամեայ հաստատութիւնը վերջերս աւելի ճոխացուցած ենք բերել տալով եւրոպական ամեն տեսակ բնուէր դեղորայք, սրէսխաշիթեներ եւ հանքային թարմ շուրեր:

Յաճախորդները կրնան ապահով ըլլալ դեղերուն խնամեալ եւ արագ պատրաստութեան ու գիներու չափաւորութեան մասին:

Դեղարանս կը յաճախեն Հայ եւ օտար բարեհամբաւ բժիշկներ ինչպէս նաև հանրութեան ծանօթ վկայեալ ու փորձ մանկաբարձներ:

ԳԷՈՐԳ ԹՕԳԱԹԵԱՆ

ԿԱՇԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉ (Tapissier)

Բաղաքիս երեւելի հայ տուններուն ծանօթ յաճախորդ, կը պատրաստէ

գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վաշադոյր, Լն: Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել Հայկ. Մեծ Սրճարանը:

ԿԱԹՆԱՏՈՒՆ - ՃԱՇԱՐԱՆ

ՆՈՐ ԴԱՐ

Այս նոր բացուած ճաշարանին առաւելութիւններն են. ծովեղերեայ օդ, ամենամաքուր սպաս, և խնամեալ սպասարկութիւն, — ինչ որ կը փնտռուի յաճախ ուրիշ ճաշարանաց մէջ: —

Կերակուրները պոլսական ճաշակով պատրաստուած, իրենց համեղ ու այլազան հանգամանքներով արժանի են ամենապահանջկոտ քիմքերու գնահատման:

Դիմեցէ՛ք նոր Դարի ճաշարանը, Ապու Չատըր փողոցին մէջ, Դազարեան Եղբարց Վաճառատան դիմաց. գնացէ՛ք, ճաշահեցէ՛ք ու տեսէ՛ք: